485

1. Փրկության ենք մենք կանչված,
Օրհնության ենք մենք կանչված,
Սիրո Աստվածն է մեզ հրավիրել:

Բացված է վաղուց ճամփան երկնքի,
Այնտեղ է տանում թռիչքն իմ մտքի,
Երկրից երկինք սանդուղք է դրված,
Հիսուս է նրա վրա գրված:

2. Հավատք, սեր, խաղաղություն,
Քաղցրություն, համբերություն.
Քրիստոսով այդ ամենը կունենանք:

Հիսուսը ինքն է հսկում այդ ճամփան,
Քույրե՛ր, եղբայրնե՛ր, լինենք միաբան,
Իրար ձեռք բռնած՝ մենք էլ բարձրանանք,
Մենք էլ այդ երթին միանանք:

3. Աստված Իր սերը հայտնեց
Ու միակ Որդուն զոհեց,
Որ լինենք այնտեղ, ուր որ Ինքն է:

Մեղավորները, արդարանալով,
Վեր են բարձրանում ուրախանալով,
Փրկության հույսն է նրանց վեր տանում,
Սուրբ Հոգով են նրանք զորանում:

4. Քրիստոսով ուրախ եղե՛ք,
Աղոթքում հարատևե՛ք,
Որ ձեր կյանքով նմանվեք Հիսուսին:

Էլ իմաստ չունի այստեղ մնալը,
Երանություն է երկինք գնալը,
Այստեղ զրկանք կա, տառապանք բազում,
Այնտեղ Տերն է մեզ սպասում: